

Վահագն Հակոբյան  
«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի  
գիտավերլուծական կենտրոնի փորձագետ  
Գիտությունների ազգային ակադեմիայի  
Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ  
[vah.hakobyan@gmail.com](mailto:vah.hakobyan@gmail.com)  
091 55 59 72  
055 12 12 53

## Вокруг турецко- китайских отношений

### On Turk-Chinese Relations

### Թուրք-չինական հարաբերությունների շուրջ

Բանալի բառեր

Աշխարհաքաղաքականություն, եվրասիականություն, աշխարհակարգ,  
ռազմավարություն, կողմնորոշում, համագործակցություն, հիմնախնդիր,  
տարածաշրջան:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ երկբևեռ աշխարհը դարձավ միաբևեռ, Թուրքիան կորցրեց հակախորհրդային պատնեշի իր դերը: Ստեղծված նոր աշխարհակարգի պայմաններում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը նոր երանգավորումներ ստացավ, որում առկա է ազդեցության տարածման քաղաքականությունը դեպի արևելք ընդհուպ Միջին Ասիայի թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցած տարածքներ: Այս կոնտեքստում թուրք-չինական հարաբերությունները զարգացման նոր և առավել խոր համագործակցության փուլ են մտել: Երկկողմ հարաբերությունների նման մերձեցումը թույլ է տալիս կարծել, որ այն սերտորեն աղերս ունի Թուրքիայի արտաքին քաղաքական արևմտյան կոմնորոշումից դեպի արևելյան հնարավոր փոփոխության հետ: Այս հանգամանքի համար առկա են այնպիսի գաղափարական հիմքեր, ինչպիսին եվրասիականությունն է և պանթուրքիզմը: Սույն հոդվածում մենք կանդրադառնանք թուրք-չինական հարաբերությունների զարգացմանը, կփորձենք գնահատել դրանց նշանակությունը

Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններում և այդ հարաբերությունների կարևորությունը համաշխարհային քաղաքականությունում: Ինչպես նաև կփորձենք հասկանալ թե թուրք-չինական հարաբերությունների զարգացումն որքանով կարող է փոփոխության ենթարկել Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, կամ հնարավոր է այն էականորեն ազդի Թուրքիայի և իր ռազմավարական դաշնակից ԱՄՆ-ի հարաբերությունների վրա:

Նախ պետք է նշել, որ Թուրքիային Չինաստանը գլխավորապես հետաքրքրել և հետաքրքրում է որպես առևտրային գործընկեր իր մեծ շուկայով և առաջարկած արտադրանքով: Թերևս այս տեսանկյունից Չինաստանի նկատմամբ Թուրքիայի ցուցաբերած հետաքրքրությունը լավագույնս բնորոշվում է Թուրքիայի նախկին նախագահ Քենան Էվրենի հետևյալ արտահայտությունով. «որքան լավ կլինի եթե մենք կարողանանք նարինջ վաճառել յուրաքանչյուր չինացու» : Երկկողմ առևտրի ծավալների արագ աճի մասին են խոսում նաև թվերը : Չինաստանը Թուրքիայի արտահանման շուկայում զբաղեցնում է 14-րդ տեղը<sup>1</sup>: 2000թ.-ին երկկողմ առևտուրը կազմել է 2 միլիարդ ամերիկյան դոլար, այսօր այն հասնում է 24 միլիարդ ամերիկյան դոլարի:<sup>2</sup> Նախապատեսվում է մինչև 2015թ.-ը երկկողմ առևտուրը հասցնել մինչև 50 միլիարդ ամերիկյան դոլարի, իսկ մինչև 2020թ.-ը 100 միլիարդ: Դեպի Թուրքիա ներմուծումը Ռուսաստանից աճել է 105% 2000թ.-ից 2006թ.-ը ընկած ժամանակահատվածում: Նույն ժամանակաշրջանի համար ներմուծումը Գերմանիայից աճել է 350% , իսկ Չինաստանից՝ 618%:<sup>3</sup>

2010թ.-ի Վեն Ջիանբաոի Թուրքիա կատարած այցի ժամանակ որոշվեց թուրքական և չինական համատեղ միջոցներով կառուցել Էդիրնե-Կարս երկաթուղին: 2012թ.ին Չինաստանի փոխնախագահ Հի Ջիպինգի այցի ժամանակ համաձայնություն կայացավ երկաթուղու շինարարության և միջուկային էներգիայի ոլորտում համագործակցության շուրջ: Թուրքիան պլանավորում է հիմնել 5000 կմ երկարությամբ երկաթուղի, ներառյալ արագընթաց երկաթուղիներ, որոնք պետք է կառուցվեն չինական ընկերությունների հետ<sup>4</sup> : 2011թ.-ին Թուրքիա է գնացել 31.5 մլն

<sup>1</sup> Questioning Turkey's China trade, Aktay Atli, Volume 10, number 2, p. 108, <http://www.turkishpolicy.com/dosyalar/files/altay%20atli%C4%B1.pdf>, 10.08 2014

<sup>2</sup> <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-china.en.mfa>

<sup>3</sup> *Ethno-Diplomacy: The Uyghur Hitch in Sino-Turkish Relation*, by Yitzhak Shichor, Copyright © 2009 by the East-West Center, Policy studies 53, P 37, <http://www.eastwestcenter.org/fileadmin/stored/pdfs/ps053.pdf>, 01.08 2014

<sup>4</sup> Turkey-china relations: rising partnership. 2013, 4, 15, selcikcolakoglu, p. 40. [http://www.orsam.org.tr/en/enUploads/Article/Files/2013415\\_3selcikcolakoglu.pdf](http://www.orsam.org.tr/en/enUploads/Article/Files/2013415_3selcikcolakoglu.pdf), 15.08.2014

գրուսաշրջիկ, որոնցից 100.000-ից ավելին չինացիներ(մինչ այդ այդքան շատ չէր եղել):<sup>5</sup> 2012թ.-ի փետրվարին Չինաստանի փոխնախագահ Սի Յզինպինի Թուրքիա կատարած այցի ժամանակ կողմերի մեջ համաձայնագիր կնքվեց, որի համաձայն երկկողմ առևտուրը հնարավոր է կատարել թուրքական լիրայով և չինական յուանով: Սակայն պետք է նշել, որ Չինաստանը միակ երկիրը չէ, որի հետ Թուրքիան առևտուրը իրականացնում է ազգային դրամով: Իրանի և Ռուսաստանի հետ նույնպես առևտուրը իրականացվում է այդ երկրների և Թուրքիայի ազգային դրամներով : Այնպես որ Չինաստանի հետ առևտուրը ԱՄՆ դոլարով չանելը Թուրքիայի կողմից հակաամերիկյան տնտեսական նոր քաղաքականություն դիտելը այնքան էլ հիմնավոր չի լինի: Դա ավելի շատ ուժեղ ինքնուրույն արտաքին քաղաքականություն կարելի է որակել: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Ռուսաստանը համարվում է Թուրքիայի առևտրային երկրորդ գործընկերը (առաջինը Գերմանիան է, իսկ երրորդը Չինաստանը), և այն չի ազդել թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, ապա չնայած թուրք-չինական տնտեսական փոխհարաբերություններում առկա հսկայական գումարներին, դեռևս վաղ է ենթադրել, որ այն էականորեն կազդի թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:

Չինաստանը Թուրքիային հետաքրքրում է նաև էժան զինվորական արտադրանք ունենալու առումով: 1996թ.-ի Թուրքիայի և Չինաստանի միջև պայմանագիր կնքվեց, որով նախատեսվում էր Թուրքիայում հիմնել 150 միլիոն դոլար արժողության WS1 հրթիռների արտադրություն<sup>6</sup>: Թուրք-չինական հարաբերություններում իրադարձային եղավ 2010թ.-ին Թուրքիայում անցկացված համատեղ զորավարժությունը: Այն անցկացվեց ՆԱՏՕ-ի բազայում և մինչև Թուրքիա ժամանելը չինական ավիացիան երկու կանգառ ունեցավ՝ Պակիստանում և Իրանում : Այս քայլով Չինաստանը ցանկանում էր ընդգծել իր ռազմավարական հետաքրքրությունը Միջին Ասիայում, որտեղ ԱՄՆ-ը ռազմական ներկայությունը այնքան էլ ընդգրկուն չէ:<sup>7</sup> Թուրք-չինական վերոնշյալ զորավարժությունների վերաբերյալ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Ջեյմս Կլեյդը հայտարարեց, որ այդ զորավարժությունները խոսում են Թուրքիայի բազմակողմ արտաքին քաղաքականության մասին: <sup>8</sup> Այսինքն Վաշինգտոնը, գոնե պաշտոնական

<sup>5</sup> <http://russian.people.com.cn/95181/7780115.html>, 20.08 2014

<sup>6</sup>Turkey-china relations: rising partnership. 2013, 4, 15, selcikcolakoglu, p. 40.

[http://www.orsam.org.tr/en/enUploads/Article/Files/2013415\\_3selcukcolakoglu.pdf](http://www.orsam.org.tr/en/enUploads/Article/Files/2013415_3selcukcolakoglu.pdf) , 22.08.2014

<sup>7</sup> *Арташес Тер-Арутюнян*, ТУРЕЦКО-КИТАЙСКИЕ ОТНОШЕНИЯ,

[http://www.noravank.am/rus/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=5186](http://www.noravank.am/rus/articles/security/detail.php?ELEMENT_ID=5186), 3.12.2010

<sup>8</sup> <http://www.portalostranah.ru/view.php?id=205>, 08.08.2014

մակարդակով, այդ գորավարժություններում հակաամերիկյան մեսինջներ չտեսավ: 2013թ.ին սեպտեմբերի 26-ին, Թուրքիան հայտարարեց, որ չինական ընկերությունը հաղթել է Թուրքիայի հրթիռային համակարգը արդիականացնելու համար հայտարարված մրցույթում, որը արժե 3 միլիարդ ամերիկյան դոլլար: Այս նույն մրցույթին մասնակցում էին նաև ամերիկյան և ռուսական ընկերություններ: ԱՄՆ-ը, ողջունելով թուրք-չինական հարաբերությունների զարգացումը, այնուամենայնիվ փորձեց ձախողել այս գործարքը, կամ գոնե մասնակցություն ունենալ դրան: <sup>9</sup> Այս առիթով իր անհանգստությունը հայտնեց Թուրքիայում ԱՄՆ դեսպանը, ով հայտարարեց, որ դա կարող է վատ անդրադառնալ թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: Որին ի պատասխան Գյուլը հայտարարեց, որ Թուրքիան հաշվի է առնում է իր դաշնակիցների շահերը, բայց Թուրքիայի շահերը իրենց համար առաջնային է:<sup>10</sup> Սակայն արդյունքում մի շարք խնդիրների պատճառով այս գործարքը կյանքի չկոչվեց: Այժմ Թուրքիան իր հրթիռային համակարգը արդիականացնելու համար բանակցում է ֆրանս-իտալական Եվրոսամ (Eurosam) ընկերության հետ, և գործարքի պարտադիր պայմաններից է Թուրքիայի տարածքում զենիթահրթիռային համալիրների համատեղ արտադրության բացումը:<sup>11</sup>

Թուրք-չինական ռազմական համագործակցության հնարավոր զարգացումները և դրանց բնույթն ու նպատակը հասկանալու համար անհրաժեշտ է կանգ առնել մի շարք վիճակագրական տվյալների վրա: Պետք է նկատել, որ Չինաստանից ձեռք բերված ռազմական արտադրանքը կազմում է Թուրքիայի բանակի ձեռքբերումների չնչին մասը և էական ազդեցություն չունի թուրքական բանակի սպառազինության վրա: Թուրքիան ինքնուրույն ապահովում է իր ռազմական արտադրանքի 54% -ը: 1998-2007թթ Չինաստանից գնած Թուրքիան Չինաստանից գնել է 39մլն ամերիկյան դոլլարի զինտեխնիկան, որը կազմում է թուրքական բանակի ձեռքբերումների 1%-ից քիչ:<sup>12</sup> Իսկ մնացած սպառազինությունը Թուրքիան ձեռք է բերում այլ երկրներից, որտեղ առյուծի բաժին է կազմում արևմուտքից ձեռք բերված սպառազինությունը:<sup>13</sup> Թուրքիան Չինաստանի հետ հարաբերություններում փորձում է ներկայանալ որպես կամուրջ արևմուտքի և արևելքի միջև: Այս մոտեցումը խոսում է այն մասին, որ որքան էլ ջերմ լինեն թուրք-չինական հարաբերությունները, Թուրքիան հանուն դրանց չի

<sup>9</sup> Wu Zurong, US Intervention in China-Turkey Military Cooperation?, <http://www.chinausfocus.com/foreign-policy/us-intervention-in-china-turkey-military-cooperation/>, 08.08.2014

<sup>10</sup> <http://www.tert.am/ru/news/2013/10/24/ricardone-china/>, 17.08.2014

<sup>11</sup> <http://www.tert.am/am/news/2014/09/09/turkey-zenith/>, 12.09.2014

<sup>12</sup> *Ethno-Diplomacy: The Uyghur Hitch in Sino-Turkish Relation*, by Yitzhak Shichor, Copyright © 2009 by the East-West Center, Policy studies 53, p. 41.

<sup>13</sup> <http://www.mei.edu/content/sino-turkish-relations-overview>, 08.08.2014

վտանգի իր հարաբերություններն արևմուտքի հանձին ԱՄՆ-ի հետ: Արաբական գարնան դեպքերը ցույց տվեցին որ ԱՄՆ-ը կարող է շատ հանգիստ մուսուլմանական երկրներում անհանգիստ իրավիճակ ստեղծել, բացի դա Սիրիայի իրադրությունը Թուրքիայի համար այնպիսի սպառնալիք է ստեղծել, որը Թուրքիան միայնակ չի կարող հաղթահարել:

Այսպիսով ժամանակը ցույց տվեց, որ Թուրքիան դեռ չի շտապում հեռանալ իր արևմտյան գործընկերներից և Չինաստանը Թուրքիայի համար դիտվում է որպես ռազմավարական գործընկերության տարբերակ, բայց ոչ այլընտրանք արևմուտքին:

Թուրք-չինական հարաբերությունները սերտորեն կապված են եվրասիականության գաղափարի հիման վրա ընթացող քաղաքական գործընթացների հետ: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականությունը որոշ փոփոխություններ կրեց: Նախագահ Թ. Օզալը արտաքին քաղաքականության ուղղությամբ սկսեց այսպես կոչված «ակտիվիզմի» գծի անցլացումը: Այն ենթադրում էր Ռուսաստանին Կովկասից և Կենտրոնական Ասիայից դուրս մղելու քաղաքականության իրականացում:<sup>14</sup> Աշխարհի միաբնեռ դառնալուց հետո եվրասիականությունը նոր ձևակերպումների և ընկալումների կարիք ունեցավ: Եվրասիականությունը այլևս չէր ընկալվում որպես խորհրդային երկրների կողմնորոշում, այն արդեն ընկալվում էր որպես աշխարհաքաղաքական գործոն, որը կարող է հակազդել ամերիկյանացմանը: Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, թուրքերի հետ էթնիկ ընդհանրություն ունեցող ազգերով բնակեցված Միջին Ասիան թուրանական պետություն ստեղծելու համատեքստում միշտ եղել է Թուրքիայի թե քաղաքական թե հասարակական շրջանակների հետաքրքրություններում:<sup>15</sup>

Ըստ նախկին արտգործնախարար, ներկայիս վարչապետ Ահմեդ Դավութօղլուի Թուրքիան իր արտաքին քաղաքականությունում պետք է առաջնորդվի և նեոպանթուրքիզմով, և նեոօսմանիզմով, և եվրասիականությունով:

Թուրքական ծագումով ամերիկացի հետազոտող Սեներ Աքթյուրքը, ուսումնասիրելով թուրքական եվրասիականությունը համարում է, որ այն նպատակ ունի հաշտեցնել նախկին կայսրությունները՝ Թուրքիան և Ռուսաստանը: Հեղինակի բնորոշմամբ՝

---

<sup>14</sup> Ռ. Սաֆրաստյան, Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը. Մեծ խաղի դրվագներ: 21-րդ դար, 2(12), Երևան 2006թ., էջ. 78:

<sup>15</sup> Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելին հաճախ էր խոսում թուրքական աշխարհի մասին << աղբիատիկ ծովից մինչև Չինական մեծ պատ>>:

թուրքական եվրասիականության կառուցվածքային առանձնահատկության մեջ գլխավորը Ռուսաստանի և Թուրքիայի պայքարն է ընդդեմ Արևմուտքի: <sup>16</sup>

Եվրասիականությանն անդրադառնալիս չպետք է շրջանցել նաև եվրասիականության գաղափարախոս և այդ գաղափարի տարածման գործում մեծ ավանդ ունեցող Ալեքսանդր Դուգինինին: Վերջինս պանթուրանիզմը համարում է եվրասիականության բաղկացուցիչ մասը: <sup>17</sup> Եվրասիականության գաղափարը Թուրքիայում տարածելու համար Ալեքսանդր Դուգինը բավականին ակտիվ քայլեր է իրականացրել: Նրա եվրասիականության վերաբերյալ գրած գրքերը հրատարակվում էին Թուրքիայում և ծառայում էին որպես բուհական դասագրքեր: Ըստ Դուգինի Չինաստանը Ռուսաստանի ամենավտանգավոր աշխարհաքաղաքական հակառակորդն է: Հետևաբար, ըստ դուգինյան եվրասիականության, ապագայում Եվրասիայում պետք է լինի երկու մեծ կայսրություն՝ ռուսական և իսլամական: <sup>18</sup> Դուգինը որպես նոր իսլամական կայսրության հիմնադիր տեսնում է Թուրքիային: Դուգինը եվրասիականության տեսության հիման վար ստեղծվելիք աշխարհակարգը և դրա սուբյեկտները տեսնում է որպես միջոց՝ պայքարելու ԱՄՆ-ի և Չինաստանի դեմ: Անկախ դուգինյան եվրասիականության տեսությունից և դրանում Թուրքիայի ունեցած դերակատարությունից, Թուրքիան մեծ հետաքրքրություն ունի միջինասիական տարածաշրջանում, որտեղ Թուրքիայի շահերը աղերսվում են Չինաստանի և Ռուսաստանի հետ: Թուրքական եվրասիականության հայեցակարգը խոր արմատներ գցեց քեմալիզմի հակառակորդների մոտ: Արդյունքում Թուրքիայի քաղաքական և զինվորական վերնախավում ի հայտ եկան մարդիկ ովքեր հնարավոր համարեցին արևելամետ ռազմավարական գծի ընտրությունը: <sup>19</sup> Թուրքիան իր դիրքերի ամրապնդումը Միջին Ասիայում իրականացնում է բացառապես «փափուկ ուժի» միջոցով : Միջինասիական երկրներում նկատվում է թուրքական կապիտալի մեծ հոսք: Թուրքիան միջինասիական երկրներում հիմնել է այսպես ասած «Տեքստիլ

<sup>16</sup> *Արեստակես Միմալորյան*, << ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ, 26. 07.2010, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4956](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4956)

<sup>17</sup> *Nadir Devlet*, When Russian Eurasianism Meets Turkey's Eurasia, The german marshal found of teh unites states strenghtening transatlantic cooperation Analysis march 8, 2012, p. 2.

<sup>18</sup> *Nadir Devlet*, When Russian Eurasianism Meets Turkey's Eurasia, The german marshal found of teh unites states strenghtening transatlantic cooperation Analysis march 8, 2012, p. 2.

<sup>19</sup> Ռ. Մաֆրաստյան, Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը. Մեծ խաղի դրվագներ: 21-րդ դար, 2(12), Երևան 2006թ., էջ. 79:

կայսրություն»:<sup>20</sup> Այստեղ թուրքական ընկերությունների իրականացրած ծրագրերի արժեքը հասնում է 50 միլիարդ ամերիկյան դոլարի:<sup>21</sup> Թուրքիան 2012թ.-ից համարվում է ՇՀԿ-ի բանակցող գործընկեր: <sup>22</sup> Թուրքական եվրասիականության նկատմամբ արևմուտքի հնարավոր վերաբերմունքը դիպուկ է ներկայացրել Չինաստանի Ժողովրդագրական գիտությունների ակադեմիայի դոկտոր Ջաո Լինգլինը: Ըստ Ջաո Լինգլինի Թուրքիան ժամանակակից պանիսլամիզմի և պանթուրքիզմի հիմնաքարն է և նրա դերը միջինասիական երկրներում թերագնահատելը սխալ կլինի: Արևմուտքը կարող է այս փաստը օգտագործել իր ռազմական ներկայությունը տարածելու համար:<sup>23</sup> Այսինքն թուրքական եվրասիականությունը դժվար թե հանգեցնի Թուրքիայի Ռուսաստանի հետ դաշինք ստեղծելուն: Ավելին, այն կարող է նպաստել Միջին Ասիայի ամերիկանացման փորձերին: Թուրքիան հանդիսանում է ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցը, ՆԱՏՕ-ի անդամ է: Չնայած թուրք-ամերիկյան հարաբերություններում երբեմն լինում է անհամաձայնություն կարևոր հարցերի շուրջ, ինչպիսին եղավ Իրաքյան պատերազմի ժամանակ, այնուամենայնիվ այդ անհամաձայնությունները, ինչպես նաև եվրասիականությունն ու թուրք-չինական բարեկամական հարաբերությունները բավարար չեն Թուրքիայի համար ԱՄՆ-ի դաշնակցի կարգավիճակից հրաժարվելու համար: Թուրքիան կարևոր տեղ է զբաղեցնում Մեծ Մերձավոր Արևելքի ձևավորման ԱՄՆ-ի ծրագրում: Թուրքան ԱՄՆ-ի կողմից համարվում է որպես մուսուլմանաբնակ աշխարհիկ պետության մոդել և ԱՄՆ-ը նախատեսում է պետության այդպիսի մոդել ներդնել մերձավորարևելյան մուսուլմանական երկրներում: Հանուն միջինասիական երկրների ԱՄՆ-ի հետ կապերի խզումով Թուրքիան բացի նրանից, որ կկորցնի իր կարևոր դերը Մերձավոր Արևելքում, նաև լուրջ խնդիրներ կունենա պետության կայունության պահանման հարցում: ԱՄՆ-ը կարողանում է մուսուլմանաբնակ երկրներում անհագիստ իրավիճակ ստեղծելով հեղափոխություն իրականացնել, վարչակարգեր փոխել և այդ երկրներում կառավարելի քառսի հասնել: Այնպես որ

---

<sup>20</sup> Ашот Егиазарян, Геополитические приоритеты Китая в Кавказско-Каспийско-Централноазиатском регионе, 21-րդ դար, 3 (5), 2004, ст. 79.

<sup>21</sup> [http://www.mfa.gov.tr/turkey\\_s-relations-with-central-asian-republics.en.mfa](http://www.mfa.gov.tr/turkey_s-relations-with-central-asian-republics.en.mfa), 22.08.2014

<sup>22</sup> Zan Tao, *An Alternative Partner to the West? Turkey's Growing Relations with China*, <http://www.mei.edu/content/alternative-partner-west-turkey%E2%80%99s-growing-relations-china>, 11.08.2014

<sup>23</sup> *Ethno-Diplomacy: The Uyghur Hitch in Sino-Turkish Relation*, by Yitzhak Shichor, Copyright © 2009 by the East-West Center, Policy studies 53, p. 47.

ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունների վտանգելով Թուրքիան կարող է շատ թանկ վճարել:

Այսօր Չինաստանում ապրում է յոթ թուրքալեզու փոքրամասնություն:<sup>24</sup> Այս ազգերի մեջ մեծ է ուլդուրների թիվը, որոնք թուրք-չինական հարաբերություններում առանցքային տեղ են զբաղեցնում: Ուլդուրական տարածքը՝ Արևելյան Թուրքեստանը, Չինաստանի վերահսկողության տակ է գտնվում արդեն 250 տարի: Չինացիները այն վերանվանել են «Սյանձին», որը նշանակում է «գրավված հողեր»<sup>25</sup>: Սյանձինի տարածքը 1.66 մլն. քկմ է, իսկ բնակչությունը 15.6 մլն, որից 11 միլիոնը ուլդուրներ են: Սյանձինի հյուսիսային հատվածում 1945-1949թթ.ին Մոսկվայի օգնությամբ ստեղծվել և գոյություն է ունեցել Արևելա-թուրքեստանյան հեղափոխական Հանրապետությունը: Սակայն Մաո Յզեդունի հաղթանակից հետո այն այլևս պետք չէր Կրեմլին, հետևաբար դադարեց գոյություն ունենալ և մտավ Չինաստանի կազմի մեջ՝ որպես ինքնավար շրջան:<sup>26</sup> Այնուհետև չինական իշխանությունները փորձում էին Սյանձինում վերաբնակեցնել չինացիների և փոփոխել նահանգի ժողովրդագրական պատկերը: Այս քաղաքականության արդյունքում Սյանձինում մշտապես պահպանվում էր լարված իրադրությունը և տեղի էին ունենում հակակառավարական ելույթներ, որոնք երբեմն սուր բախումների տեսքով էին արտահայտվում: Սյանձինի ուլդուրների վիճակը համեմատաբար բարելավվեց Դեն Սյաոպինի օրոք. շատ մզկիթներ վերականգնվեցին, մեծ թվով դուրանի դպրոցներ հիմնվեցին, 1980-ականներին մուսուլման ուլդուրներին կենտրոնական կառավարությունը, ելնելով իր դիվանագիտական շահերից, աջակցում էր այցելել նավթով հարուստ մուսուլմանական երկրներ:<sup>27</sup> Սակայն դեպի Սյանձին մեծ թվով մուսուլմանների այցելությունը և երկկողմ շփումը հանգեցրեց ուլդուրների մոտ նոր գաղափարների ձևավորմանը. նրանք սկսեցին մտածել աշխարհում իրենց արժանի տեղն ունենալու մասին:<sup>28</sup> 1990 ականներին միջինասիական երկրներն աջակցում էին ուլդուրներին, փորձելով

<sup>24</sup> Giray Fidan, Sino-Turkish relations: AN overview , <http://www.mei.edu/content/sino-turkish-relations-overview>, 08.08.2014

<sup>25</sup> <http://wordyou.ru/v-mire/erdogan-stal-pervym-tureckim-liderom-posetivshim-ujgurskuyu-provinciyu.html>, 25.08.2014

<sup>26</sup> Борис МАЙНАЕВ, УЙГУРЫ – ЭТНИЧЕСКАЯ БОМБА В ВЕЛИКОЙ КИТАЙСКОЙ СТЕНЕ, <http://www.ca-c.org/datarus/majnaev.shtml>, 18.07.2014

<sup>27</sup> On over view of Xinjiang problem, Debasish Cnoudhary, World focus, China today, volume 27, number 3, march 2006, p. 27.

<sup>28</sup> On over view of Xinjiang problem, Debasish Cnoudhary, World focus, China today, volume 27, number 3, march 2006, p. 21.



տարածաշրջանում ձևավորել մուսուլմանական համերաշխություն: Մակայն Շանհայի հինգի շրջանակներում Չինաստանը կարողացավ նրանց ետ պահել նման գործունեությունից: 1998թ.-ին Շանհայի 5-ի երրորդ գագաթնաժողովի ժամանակ կողմերը համաձայնվեցին համատեղ պայքարել էթնիկ անջատողականության, ահաբեկչության, կրոնական ծայրահեղականության դեմ: 2001թ.-ին ՇՀԿ.-ի հիմնադրումից հետո այս համագործակցությունն ավելի խորացավ:

Հակաչինական գործողություններում ուղղուրները ակնկալում են նաև Թուրքիայի օգնությունը, սակայն Չինաստանը մի շարք քայլեր է ձեռնարկել, որոնց արդյունքում Թուրքիան զրկված է ուղղուրներին օգնելու հնարավորությունից: 2000թ.-ի փետրվարի 14-ին ստորագրվեց անվտանգության վերաբերյալ երկկողմ պայմանագիր, որով կողմերը համաձայնության եկան համատեղ պայքարել անջատողականների դեմ ուժեր կապառնան Թուրքիայի և Չինաստանի տարածքային ամբողջականությանը:<sup>29</sup> Չինաստանը Սյանձինի ուղղուրների հետ կապված ցանկացած խնդրին Թուրքիայի միջամտությունը դիտում է որպես միջամտություն իր ներքին գործերին: Թուրքիայի գործողություններն այս հարցում բավականաչափ կաշկանդված են քրդական հարցի առկայության պատճառով: Ուղղուրներին օգնություն ցուցաբերելու դիմաց Թուրքիան ի պատասխան կարող է ստանալ նույն քաղաքականությունը Չինաստանի կողմից քրդերի նկատմամբ: Չինաստանում ուղղուրների գործուն Թուրքիայի կողմից երբեմն օգտագործվում է բարելավելու և զարգացնելու թուրք-չինական հարաբերությունները: Թերևս Անկարայի կողմից նման մոտեցմամբ էր պայմանավորված 2012թ.-ի Էրդողանի այցը Սյանձին: Էրդողանի այցը Սյանձին դա Չինաստան այցի ընդամենը առաջին կանգառն էր: Ընդ որում Էրդողանի պատվիրակությունը բաղկացած էր երեք հարյուր հոգուց, այդ թվում նաև թուրք գործարարներից, որոնք նպատակ ունեին բիզնես գործունեություն իրականացնել Սյանձինում: <sup>30</sup> Էրդողանը Չինաստան այցի շրջանակներում առաջինը Սյանձին չէր կարող ժամանել առանց պաշտոնական Պեկինի համաձայնության: Թուրք-չինական հարաբերություններում նման երևույթը պետք է որակել որպես փոխադարձ բարձր վստահության առկայություն:

Թուրք-չինական հարաբերություններում միշտ չի հաջողվում ուղղուրական գործուն օգտագործել վստահության ամրապնդման համար: 2009թ.-ի հուլիսին Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլի Չինաստան կատարած այցից մի քանի օր հետո Սյանձինում ուղղուրների կազմակերպած հակաիշխանական ցույցերի ժամանակ զոհվեցին հարյուրից ավելի ուղղուրներ: Այս իրադարձությունը սրեց թուրք-չինական

<sup>29</sup> *Ethno-Diplomacy: The Uyghur Hitch in Sino-Turkish Relation*, by Yitzhak Shichor, Copyright © 2009 by the East-West Center, Policy studies 53, p. 46.

<sup>30</sup> <http://wordyou.ru/v-mire/erdogan-stal-pervym-tureckim-liderom-posetivshim-ujgurskuyu-provinciyu.html>,

հարաբերությունները: Էրդողանը շտապեց այդ դեպքերը որակել որպես «ցեղասպանություն»: Թուրքիայում պաշտոնական մակարդակով կոչ արվեց չզնել չինական արտադրանք: Թուրքիայի նման քաղաքականությունը դժգոհությունների ալիք բարձրացրեց Չինաստանում, հատկապես երիտասարդության շրջանում: Բայց թուրք-չինական հարաբերությունների լարվածությունը շուտով մոռացվեց քանի որ համաշխարհային ճգնաժամի պատճառով Թուրքիան խնդիրներ ունեցավ իր ավանդական շուկաներում. Եվրոպայում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում: Նման պայմաններում Թուրքիան շտապեց վերականգնել նախկին բարեկամական հարաբերությունները Չինաստանի հետ:<sup>31</sup> Բացի այդ ույղուրների բավունքների պաշտպանության հարցում Թուրքիայի գործողությունները հայտարարություններից այն կողմ չեն կարող անցնել, քանի որ Թուրքիայում գոյություն ունի քրդական հարց և Չինաստանը այն կարող է օգտագործել Թուրքիայի դեմ:

Այսպիսով թուրք-չինական հարաբերությունների զարգացումը կարելի է դիտարկել աշխարհաքաղաքական զարգացումների շրջանակներում տեղի ունեցող գործընթաց, որտեղ Թուրքիան, որպես տարածաշրջանային հզոր պետություն, ունենալով ռազմավարական հարաբերություններ գերտերություններից ԱՄՆ-ի հետ, փորձում է զարգացնել հարաբերություններ մեկ այլ գերտերության՝ Չինաստանի հետ: Այս իրողությունում Թուրքիան փորձում է երկու կողմերի հետ հարաբերություններից մաքսիմալ օգուտ քաղել, չվտանգելով մի երկրի հետ հարաբերությունները հանուն մյուսի: Վերջին ժամանակներում եվրասիականության գաղափարի համատեքստում Եվրասիական տնտեսական միության ձևավորումով և որոշ երկրների աշխարհաքաղաքական ուղղությունների ընտրությամբ պայմանավորված Թուրքիայի Չինաստանի հետ սերտ հարաբերությունները շատերի կողմից ընկալվեցին որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության կողմնորոշման փոփոխություն: Սակայն ինչպես արդեն նշվեց ԱՄՆ-ի հետ Թուրքիան առավել սերտ կապեր ունի և դեռ պատրաստ չէ վտանգել դրանք:

---

<sup>31</sup> <http://www.csef.ru/index.php/ru/politica-i-geopolitica/project/416-china-and-its-role-in-a-new-world-order/1-stati/883-Turkish-Chinese-Relations>, 23.08.2014

## Ամփոփագիր

Հանդիսանալով տարածաշրջանում ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը Թուրքիան բավականին ամուր գործընկերային հարաբերություններ ունի նաև Չինաստանի հետ, ինչը երբեմն դիտարկվում է որպես ռազմավարական հարաբերություն և անհանգստացնում Արևմուտքին: Այս համատեքստում կարևոր է Չինաստանի՝ որպես գերտերության և Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային տերության հարաբերությունների ուսումնասիրումը՝ հասկանալու համար Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններն ու դրանցում սպասվող փոփոխությունները:

## Резюме

Турция, являясь союзником США на Ближнем Востоке, имеет также близкие партнёрские отношения с Китаем, что в некоторых случаях рассматривается как стратегическое отношение, которое вызывает беспокойство у Запада. В данном контексте важное место имеет изучение отношения Китая как мировой державы с Турцией как региональной державы, для того чтобы понять главные направления внешней политики Турции и ожидаемые изменения в этих направлениях.